ԼԵՎՈՆ ՄԻՍԱԿԻ ԴԱՎԹՅԱՆ

ՀԽՍՀ Պետական վիճակագրական կոմիտեի նախագահ
(1988-1995թթ.)

Լևոն Միսակի Դավթյանը ծնվել է 1936թ. մայիսի 27-ին՝ Հայաստանի ԽՍՀ Լենինական քաղաքում: 1958թ. գերազանցությամբ ավարտել է Երևանի պետական համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետը և ստացել հաշվապահ-տնտեսագետի որակավորում:

1958-1960թթ. աշխատել է ՀԽՍՀ Կենտրոնական վիճակագրական բյուրոյում (ԿՎԲ) որպես ավագ տնտեսագետ, իսկ 1960-1961թ.՝ կրտսեր գիտաշխատող:

1961-1963թթ. աշխատել է որպես ՀԽՍՀ Գիտությունների ակադեմիայի տնտեսագիտության ինստիտուտի հենակետային աշխատանքի խմբի ղեկավար, 1963-1967թթ. եղել կրտսեր, այնուհետև ավագ գիտաշխատող:

1967-1975թթ. աշխատել է ՀԽՍՀ Պետպլանին կից գիտահետազոտական ինստիտուտի բաժանմունքի վարիչ, իսկ 1975-1988թթ.՝ զբաղեցրել պետի տեղակալի պաշտոնը:

1965թ. Երևանի պետական համալսարանի Խորհրդի որոշմամբ, Լ.Դավթյանին շնորհվել է տնտեսագիտական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան:

1971թ. հոկտեմբերի 13-ին ԽՍՀՄ բարձրագույն և միջին մասնագիտական կրթության նախարարության Բարձրագույն ատեստացիոն հանձնաժողովը նրան հաստատել է ավագ գիտաշխատողի գիտական աստիճանը՝ «վիճակագիր» մասնագիտությամբ:

1979թ. սեպտեմբերի 5-ին ՀԽՍՀ Գերագույն Խորհրդի նախագահության հրամանագրով Լ.Դավթյանին շնորհվել է «Հայկական ԽՍՀ վաստակավոր տնտեսագետ»-ի պատվավոր կոչում:

1988թ. սեպտեմբերի 2-ին ՀԽՍՀ Գերագույն Խորհրդի նախագահությունը Լ.Դավթյանին նշանակել է ՀԽՍՀ Պետական վիճակագրական կոմիտեի նախագահ, որտեղ և աշխատել է մինչև 1995թ.-ը:

Լ.Դավթյանը հեղինակ է մոտ 60 գիտական աշխատանքների՝ Հայաստանի ժողովրդագրության, վիճակագրության, տնտեսական պլանավորման և սոցիալական զարգացման բնագավառներում:

Լևոն Դավթյանը վախճանվել է 2003 թվականին: